Հաստատում եմ

Տնօրեն՝ Ա. Թունյան

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

Վայոց ձորի մարզ Ջերմուկ համայնք գ. Գնդեվազ
«Գնդեվազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
2-րդ դասարան
Նաիրա Միհրդատի Ներսիսյան

2023- 2024 ուստարի

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Աշակերտների քանակը դասարանում ա) աղջիկ բ) տղա	10 ա) 2 բ) 8
2. Անապահով ընտանիքների թիվը ▪ Նրանց երեխաների թիվը	1 • 4
3. Բազմազավակ ընտանիքների թիվը ▪ Նրանց երեխաների թիվը	1 •4
4. «Ռիսկային խմբի» ընտանիքների թիվ	-
5. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում	1
6. Խնամակալության տակ գտնվող մարդկանց թիվը	-
7. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ	1(առողջական խնդիրներ)
8. Դժվար դաստիարակվող երեխաներ	1(ԿԱՊԿՈՒ)

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկզբին

1. Կազմել աշակերտների անվանացանկը և լրացնել էլեկտրոնային դասամատյանը /սեպտեմբեր/
2. Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը
3. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքների պլանը
4. Կազմակերպել ծնողական խորհրդի նախագահի և անդամների ընտրություն

Ամենօրյա աշխատանք

1. Վարել էլեկտրոնային դասամատյանը
2. Հետևել դասարանի կարգապահությանը
3. Հետևել հերթապահությանը դասարանում

Ամենշաբաթյա աշխատանք

1. Ապահովել ծնող-դպրոց կապը
2. Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից
3. Անցկացնել դասղեկական ժամեր
4. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական միջոցառումներին
2. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:
3. Կազմակերպել ծնողական ժողովներ:

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2-րդ դասարանում սովորում է 10 աշակերտ: Աշակերտներից 9-ը տառաճանաչ են, գիտեն գրել, կարդալ, ունեն բանավոր կապակցված խոսք: Բոլոր աշակերտներն էլ ակտիվ և պարտաճանաչ մասնակցել են ուսումնական և արտադասարանական միջոցառումներին: Աշակերտներից մեկն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, որի հետ տարվում են անհատական աշխատանքներ: Մյուս աշակերտների ճանաչողական հմտությունները, ֆիզիկական զարգացվածության աստիճանը համապատասխանում են տարիքային նորմերին: Աշակերտների ընտանեկան սոցիալական վիճակը լավ է, միայն մեկն ունի անապահով կարգավիճակ: Դասարանում տիրում է առողջ, ընկերական միջանձնային հարաբերություններ, հանդուրժողականության, փոխօգնության մթնոլորտ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

- *Ծնողական ժողովների, ծնողխորհրդի հետ աշխատանքների կազմակերպում,*
- *Աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների կարևորում,*
- *Զննական պարագաների կատարելագործում, նորերի ստեղծում,*
- *Անհատական և խմբային հանդիպումների կազմակերպում,*
- *Աշակերտների մեջ հայրենասիրության, պատասխանատվության, հոգևոր արժեքների սերմանում,*
- *Թեմատիկ, նպատակային, հայրենագիտական էքսկուրսիաների կազմակերպում,*
- *Ներդասարանական, ներդպրոցական, արտադասարանական ուսումնադաստիարակչական աշխատանքների միջև ներդաշնակ կապի ստեղծում:*

3. Հայեցի դաստիարակություն

3.1. Հոգևոր դաստիարակություն

- *Ազգային, մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը նպաստող միջոցառումների կազմակերպում:*
- *Աշակերտներին հաղորդակից դարձնել մանկական Աստվածաշնչին:*
- *Երեխաներին հեռու պահել աղանդավորական խմբերի ազդեցություններից:*
- *Ձևավորել անձ, որը կգիտակցի սեփական մշակույթի, կրոնի կարևորությունն ու նշանակությունը:*
- *Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը, նրա հերոսական էջերին, հայոց եկեղեցիների պատմությանը.*
- *Այցելել մշակույթի կենտրոններ, զրույց անցկացնել քրիստոնեության մասին:*

3.2. Գեղագիտական դաստիարակություն

- *Ձևավորել, զարգացնել և աշակերտի գիտակցությանը հասցնել գեղագիտական արժեքները գնահատելու, գեղեցիկը, բարին, ճշմարիտը տարբերակելու կարողություններ և հմտություններ:*
- *Կազմակերպել էքսկուրսիաներ, դասեր բնության գրկում,*
- *Այցելություններ թանգարաններ, պատկերասրահ, տեսարժան վայրեր՝ Օշական, Մատենադարան, Տառերի պուրակ, Էրեբունի արգելոց-թանգարան:*
- *Օգտագործել մայրենիի, կերպարվեստի, երաժշտության, տեխնոլոգիայի դասաժամերը այդ նպատակով:*

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

- *Զևավորել հարգանք և սեր հայոց պատմության և մշակույթի հանդեպ։*
- *Զևավորել քաղաքացիական ակտիվ դիրքորոշում և արժանապատվություն։*
- *Հաղորդել հիմնավոր գտելիքներ սեփական երկրի խորհրդանիշների մասին։*
- *Կազմակերպել թեմատիկ միջոցառումներ, տեսարժան վայրերի, թանգարանների այցելություններ։*

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

- *Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում։*
- *Վնասակար սովորույթների համդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում։*
- *Ֆիզկուլտ-դադարների հաճախակի կազմակերպում։*
- *Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը նպաստող ակտիվ միջոցառումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, արշավներ, էստաֆետային խաղեր, սպորտլանդիաներ։*

3.5. Աշխատանքային դաստիարակություն

- *Հարգանք սերմանել ինչպես սեփական, այնպես էլ ուրիշի աշխատանքի նկատմամբ։*
- *Ներգրավել աշակերտներին դասարանական, համադպրոցական աշխատանքներին։*
- *Դասարանում կազմակերպել աշխատանքային բաժանում։*
- *Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն աշխատանքի, աշխատատեղի, աշխատանքային գործիքների նկատմամբ.*
- *Կազմակերպել շաբաթօրյակներ, ծառատունկեր.*
- *Զրույցներ շրջապատի մաքրության կարևորության մասին։*

3.6. Բնապահպանական դաստիարակություն

- *Բնության, նրա տված բարիքների հանդեպ ձևավորել հոգատար հանդուրժող վերաբերմունք։*
- *Ծաղիկների մշակում*
- *Թափոներից, բնական և արհեստական նյութերից իրերի պատրաստում։*
- *Էքսկուրսիաների կազմակերպում բնության գրկում։*

4. Դպրոց – ընտանիք կապը

Դպրոց – ընտանիք ամուր կապը դասվարի աշխատանքի ամենակարևոր մասն է։

1. *Կազմակերպել զրույցներ, քննարկումներ, համատեղ հանդիպումներ ծնողների, աշակերտների և ուսուցիչների միջև։*
2. *Ներգրավել ծնողներին արտադասարանական և դաստիարակչական աշխատանքներում։*

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. շաբաթ	Աշխատանքների բովանդակություն	Կատ. ժամկետը	Կատարող
	I կիսամյակ		
1.	*Գիտելիքի օր* *Կազմակերպչական հարցերի քննարկում:* *Զրույց «Ինչ եմ ակնկալում սովորել նոր ուսումնական տարում» թեմայով*	*04.09-08.09*	*դասվար, աշակերտ*
2.	*Դասարանական ժողով (դասարանի ավագի ընտրություն)* *Զրույց «Բնության ձայները» թեմայով*	*11.09-15.09*	*դասվար, աշակերտ*
3.	*Դասարանական անկյան ստեղծում (դրոշ, զինանշան, օրհներգ, դասացուցակ, հերթապահություն)* *Զրույց «Սեպտեմբերի 21-ը՝ անկախության օր»*	*18.09-22.09*	*դասվար, աշակերտ*
4.	*Զրույց «Ամեն ինչ պետք է իր տեղն ունենա» թեմայով*	*25.09-29.09*	*դասվար, աշակերտ*
5.	*Ուսուցչի օր, բացիկների պատրաստում* *Զրույց « Ինչպիսին պիտի լինի ուսուցիչը» թեմայով*	*02.10-06.10*	*դասվար, աշակերտ*
6.	*Այցելություն բնության թանգարան* *Բանաստեղծությունների ընթերցում գրադարանում*	*09.10-13.10*	*դասվար, աշակերտ* *գրադարանավար*
7.	*Համագործակցություն («Մեր բակի պատմությունը» պատմվածքի ընթերցում,քննարկում)* *Շառլ Ազնավուր (երգերի ունկնդրում)*	*16.10-20.10*	*դասվար, աշակերտ*
8.	*Առողջ ապրելակերպ*	*30.10-03.11*	*դասվար, աշակերտ*
9.	*Զրույց «Գիրքը գիտելիքի աղբյուր է»* *«Աշնան գույներ» նկարչություն ջրաներկով*	*06.11-10.11*	*դասվար, աշակերտ*
10.	*«Ի՞նչ է ընկերությունը», «Ո՞վ է իսկական ընկերը», «Իմ ընկերը»*	*03.11-17.11*	*դասվար, աշակերտ*
11.	*Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում* *Անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը*	*20.11-24.11*	*դասվար, աշակերտ*
12.	*Կոնֆլիկտների հաղթահարում («Արի հաշտվենք» պատմվածքի ընթերցում, քննարկում)*	*27.11-01.12*	*դասվար, աշակերտ*
13.	*Զրույց-քննարկում «Ում եմ ուզում նմանվել» , «Իմ սիրելի հերոսը»*	*04.12-08.12*	*դասվար, աշակերտ*
14.	*«Իմ ընկերները և մտերիմները» թեմայով զրույց*	*11.12-15.12*	*դասվար, աշակերտ*
15.	*Նախապատրաստվել Ամանորին, դասարանի զարդարում*	*18.12-22.12*	*դասվար, աշակերտ*

II կիսամյակ			
1.	*Զրույց «Հայկական բանակի օրը» թեմայով «Դպրոցական կյանքի կանոնները» թեմայով զրույց*	*22.01-26.01*	*դասվար, աշակերտ*
2.	*Հայ մանկագիրների ստեղծագործություններ և քննարկումներ «Ես՝ փոքրիկ զինվոր» շարադրանք*	*29.01-02.02*	*դասվար, աշակերտ*
3.	*Սեռային խնդիրներ՝«Տոնը» պատմվածքի ընթերցում և քննարկում «Իմ տարբեր դերերը» թեմայով զրույց*	*05.02-09.02*	*դասվար, աշակերտ*
4.	*«Թումանյանական օրեր», « Գիրք նվիրելու օր», «Մայրենիի օր» «Հայրիկս աշխատանքից տուն է եկել» թեմայով զրույց*	*12.02-16.02*	*դասվար, աշակերտ*
5.	*Դասարանական գրադարանի գրքերինորոգում և համալրում նոր գրքերով: Փետրվարի 21-ը՝Մայրենի լեզվի օր*	*19.02-23.02*	*դասվար, աշակերտ*
6.	*Տեղեկություններ «Մարտի 8 » տոնի, նրա ստեղծման մասին (բացիկների պատրաստում)*	*26.02-01.03*	*դասվար, աշակերտ*
7.	*Ցերեկույթ՝նվիրված մայրիկների տոնին «Մայրիկիս տոնն է» թեմայով զրույց*	*04.03-08.03*	*դասվար, աշակերտ*
8.	*Շրջակա միջավայր «Աղբն ո՞վ թափեց» պատմվածքի ընթերցում և քննարկում*	*11.03-15.03*	*դասվար, աշակերտ*
9.	*Շաբաթօրյակ «Հայկական ազգային երգ ու պար » թեմայով զրույց*	*18.03-22.03*	*դասվար, աշակերտ*
10.	*«Հանդուրժողականություն», «Հնդկացի, հնդկացի խաղա՞նք» ընթերցում և քննարկում*	*01.04-05.04*	*դասվար, աշակերտ*
11.	*Տեղեկություն «Զատիկ» եկեղեցական տոնի մասին: Զատկի ձվերի ձևավորում Հեքիաթների ընթերցում գրադարանում*	*08.04-12.04*	*դասվար, աշակերտ, գրադարանավար*
12.	*Տեղեկություններ Հայոց Մեծ Եղեռնի մասին Բարեկիրթ հաղորդակցում*	*15.04-19.04*	*դասվար, աշակերտ*
13.	*«Բանակցություններ» , «Կախարդականծրարը» պատմվածքի ընթերցում և քննարկում Անվտանգ երթևեկություն*	*22.04-26.04*	*դասվար, աշակերտ*
14.	*Մայիսյան հերոսամարտերի մասին տեղեկություններ «Համակարգիչն ընկե՞ր, թե՞ թշնամի» թեմայով զրույց*	*29.04-03.05*	*դասվար, աշակերտ*
15.	*Միջմշակութային փոխըմբռնում «Ա՛յ քեզ բան» պատմվածքի ընթերցում և քննարկում «Մենք հայ ենք» թեմայով զրույց*	*06.05-10.05*	*դասվար, աշակերտ*
16.	*«Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք» թեմայով զրույց Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս*	*13.05-17.05*	*դասվար*
17.	*Նախապատրաստում ամառային արձակուրդին Դասարանական ամփոփիչ ժողով*	*20.05-24.05*	*դասվար*

Դասղեկի ժամի տարեկան պլանավորում
1-ին կիսամյակ

Հ/հ	Անցկացման ամսաթիվը	Թեմայի անվանումը	Աշխ. ղեկավարը	Ժ/ք
1	05.09.	“Ինչ եմ ակնկալում սովորել նոր ուսումնական տարում”	Դասղեկ, աշակերտներ	1
2	12.09.	«Բնության ձայները»	Դասղեկ, աշակերտներ	1
3	19.09.	«Սեպտեմբերի 21-ը՝ անկախության օր» թեմայով զրույց	Դասղեկ, աշակերտներ	1
4	26.09.	«Ամեն ինչ պետք է իր տեղն ունենա»	Դասղեկ, աշակերտներ	1
5	03.10.	«Ինչպիսին պիտի լինի ուսուցիչը»	Դասղեկ, աշակերտներ	1
6	10.10.	Բանաստեղծությունների ընթերցում գրադարանում	Դասղեկ, աշակերտներ, գրադարանավար	1
7	17.10.	Շառլ Ազնավուր (երգերի ունկնդրում)	Դասղեկ, աշակերտներ	1
8	31.10.	«Օգնենք փետրավոր բարեկամներին»	Դասղեկ, աշակերտներ	1
9	07.11.	«Աշնան գույներ» նկարչություն ջրաներկով	Դասղեկ, աշակերտներ	1
10	14.11.	“Ինչպես անել, որ չհիվանդանալ”	Դասղեկ, աշակերտներ	1
11	21.11.	Անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը	Դասղեկ, աշակերտներ	1
12	28.11.	«Ինչո՞ւ, որտեղի՞ց…»	Դասղեկ, աշակերտներ	1
13	05.12.	«Ես եմ»	Դասղեկ, աշակերտներ	1
14	12.12.	«Իմ ընկերները և մտերիմները»	Դասղեկ, աշակերտներ	
15	19.12.	«Տաք փաթիլներ» Ամանորյա միջոցառման նախապատրաստում	Դասղեկ, աշակերտներ	1

2-րդ կիսամյակ

Հ/հ	Անցկացման ամսաթիվը	Թեմայի անվանումը	Աշխ. ղեկավարը	Ժ/ք
1	23.01	«Դպրոցական կյանքի կանոնները»	Դասղեկ, աշակերտներ	1
2	30.01	«Ես՝ փոքրիկ զինվոր»	Դասղեկ, աշակերտներ	1
3	06.02	«Իմ տարբեր դերերը»	Դասղեկ, աշակերտներ	1
4	13.02	«Հայրիկս աշխատանքից տուն է եկել»	Դասղեկ, աշակերտներ	1
5	20.02	«Փետրվարի 21-ը՝ Մայրենի լեզվի օր»	Դասղեկ, աշակերտներ	1
6	27.02	«Երբ ինձ արգելում են…»	Դասղեկ, աշակերտներ, գրադարանավար	1
7	05.03	«Մայրիկիս տոնն է»	Դասղեկ, աշակերտներ	1
8	12.03	«Մայրիկիս ձեռքերը չեն հոգնում»	Դասղեկ, աշակերտներ	1
9	19.03	Հայկական ազգային երգ ու պար	Դասղեկ, աշակերտներ	1
10	02.04	Հանդուրժողականություն	Դասղեկ, աշակերտներ	1
11	09.04	Հեքիաթների ընթերցում գրադարանում	Դասղեկ, աշակերտներ, գրադարանավար	1
12	16.04	Բարեկիրթ հաղորդակցում	Դասղեկ, աշակերտներ	1
13	23.04	Կանաչ, կարմիր, դեղին. անվտանգ երթևեկություն	Դասղեկ, աշակերտներ	1
14	30.04	Համակարգիչն ընկե՞ր, թե՞ թշնամի	Դասղեկ, աշակերտներ, ծնողներ	
15	07.05	«Մենք հայ ենք»	Դասղեկ, աշակերտներ	1
16	14.05	Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս	Դասղեկ, աշակերտներ	
17	21.05	Էքսկուրսիա. «Մեր հրաշք բնությունը»	Դասղեկ, աշակերտներ, ծնողներ	

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
01.09	Գիտելիքի օր	Դպրոց
21.09	«Անկախության օր», կավճանկարչություն	Դպրոց
05.10	Ցերեկույթ նվիրված ուսուցչի օրվան	Դպրոց
Հոկտեմբեր	Սպորտլանդիա 1-4-րդ դասարաններում	Դպրոց
Նոյեմբեր	«Ոսկե աշուն»	Դպրոց
Նոյեմբեր	«Մեր առողջությունը մեր ձեռքերում է»	Դպրոց
Դեկտեմբեր	Ամանորյա տոնահանդես	Դպրոց
Հունվար	Հայոց բանակի օր	Դպրոց
14.02	Տեառնընդառաջ	Դպրոց
19.02	Հովհաննես Թումանյան: Գիրք նվիրելու օր	Դպրոց
08.03	Ցերեկույթ «Մարտի 8»	Դպրոց
10.04	Սուրբ Զատիկ	Դպրոց

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

	Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
1.	*05.09.2023*	*1. Ծնողական խորհրդի ընտրություն* *2. Ծնող-դպրոց կապը* *3. Այլ հարցեր*	*Կընտրվեն ծնողխորհրդի անդամներ և նախագահ:* *Կքննարկվեն հարցեր ծնող-դպրոց կապն ամրապնդելու վերաբերյալ:*
2.	*20.10.2023*	*1. Վայելչագրության հարցի քննարկում* *2. Ինչպե՞ս օգնել երեխաներին՝ լավ սովորել* *3. Այլ հարցեր*	*Կարևորել վայելչագրության կանոնները, ուշադրություն դարձնել, որ երեխան կարողանա գրել գեղեցիկ և մաքուր:* *Կքննարկվեն ուսման դրդապատճառներին վերաբերող հարցեր և ուղիներ կփնտրեն այդ հարցում երեխաներին օգնելու համար:*
3.	*24.11.2023*	*1. Արդարացիություն և ազնվություն* *2. Ընտանիքում երեխաներին խրախուսելու և պատժելու ձևերը* *3. Այլ հարցեր*	*Պետք է երեխաների մեջ սերմանել ազնվություն և արդար լինելու կարողություն առաջին հերթին ընտանիքում:* *Ինչպիսի խրախուսման և պատժի ձևեր պետք է ընտրի ծնողը, որպեսզի այն օգնի երեխային, ոչ թե խաթարի նրա ներաշխարհն ու կոտրի սովորելու ցանկությունը:*
4.	*21.12.2023*	*1. Առաջադիմության վերաբերյալ հարցեր* *2. Կիսամյակի ամփոփում* *3. Այլ հարցեր*	*Կքննարկվեն աշակերտների առաջադիմության վերաբերյալ հարցեր և ձմեռային արձակուրդների ընթացքում կատարվելիք աշխատանքները.* *Կամփոփվեն առաջին կիսամյակի արդյունքները ներկայացնելով առարկայական բնութագրիչները:*
5.	*12.02.2024*	*1. Կարդալու և գրելու կարողությունների զարգացում* *2. Վտանգավոր սովորույթների մասին* *3. Այլ հարցեր*	• *Կքննարկվեն հարցեր, որոնք կնպաստեն աշակերտների կարդալու և գրելու կարողությունների զարգացմանը.* • *Վեր կհանվեն այն վտանգավոր սովորույթները, որոնք ծնողը նկատել է երեխայի կամ նրան շրջապատողների մոտ և կքննարկվեն հարցեր դրանք լուծելու վերաբերյալ:*
6.	*22.03.2024*	*1. Ծնողի հեղինակությունը և անձնական օրինակը* *2. Օրվա ռեժիմ* *3. Այլ հարցեր*	*Կքննարկվեն հարցեր ծնողի հեղինակության, օրինակի, վարքի ու վերաբերմունքի վերաբերյալ.* *Կքննարկվի երեխայի օրվա ռեժիմը և թե այն որքանով է ազդում նրա ուսման վրա:*
7.	*22.04.2024*	*1. Ընդլայնենք երեխայի հետաքրքրությունների շրջանակը* *2. Այլ հարցեր*	*Պետք է երեխայի հետաքրքրությունների շրջանակն ընդլայնող միջոցներ և մեթոդներ առաջարկել, որոնք կխթանեն նրա բազմակողմանի զարգացմանը:*
8.	*23.05.2024*	*Համատեղ ծնող ժողով. աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում*	*Կամփոփվի աշակերտների տարեկան առաջադիմությունը:*